

« Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 27/7

29 մայիսի 2013թ.

Քննարկվեց <Սանտա> ՍՊԸ 18.05.2013 թ-ի գանգատը « ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 26.04.2013 թ-ի թիվ 217645 որոշման դեմ:

<Սանտա> ՍՊԸ բողոքում մասնավորապես նշված է.

ս.թ. մայիսի 15-ին փոստով ստացել եմ Կենտրոն ՀՏ ատի կողմից 26.04.2013 թ-ին իմ՝ որպես <Սանտա> ՍՊԸ տնօրենի նկատմամբ « ԿԻՎ օրենսգրքի 170.8 հոդվածի հատկանիշով 300.000 դրամի վարչական տուգանք նշանակելու մասին որոշումը, որը հիմնավորված չէ հետևյալ պատճառներով.

1. « ԿԻՎ օրենսգրքի 170.8 հոդվածը պատասխանատվություն է սահմանում ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորման ենթակա չդրոշմավորված ապրանքներ իրացնելու համար, մինչդեռ ընկերության կողմից այդպիսի ապրանքներ չի իրացվել և իրացման փաստ արձանագրված չէ:

Խնդրում եմ նկատի ունենալ, որ օրենսգրքի համաձայն պատասխանատվություն է առաջացնում չդրոշմավորված ապրանքներ իրացնելը, որը կոնկրետ փաստ է, այլ ոչ թե իրացնելու մեջ կասկածանքը, որը կամայական և սուբյեկտիվ մեկնաբանման արդյունք է:

2. Վարչական տուգանքի համար հիմք է ընդունվել Կենտրոն ՀՏ 18.03.2013թ. թիվ 2120159 ստուգման ակտը, որին մեր առարկությունները կցվել են: Ստուգմամբ արձանագրված միակ փատն այն է, որ <Սանտա> ՍՊԸ-ն հանրային սննդի օբյեկտում բազմաբնույթ ավտոմոբիլային խմիչքների քանակության մեջ հայտնաբերվել է 0,375լ տարողությամբ 1 շիշ գինի, որի վրա բացակայել է ակցիզային դրոշմանիշը և որն առգրավվել է ստուգողների կողմից:

Մեր կողմից գրավոր բացատրվել է, որ այդ 22ի ակցիզային դրոշմանիշը հավանաբար պոկվել է և, որ ընկերությունը ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորման ենթակա չդրոշմավորված ապրանք ընդհանրապես չի իրացրել: Հետևանքը եղել է այն, որ ստուգման ակտի 2-րդ կետում՝ որպես ակցիզային դրոշմանիշների կիրառման ճշտության ստուգման արդյունք նշվել է, որ խախտվել է <Ակցիզային հարկի մասին> « օրենքի 7-րդ հոդվածի պահանջները և « Կառավարության 26.10.1999 թ-ի թիվ 662-ն որոշմամբ սահմանված կարգը:

<Ակցիզային հարկի մասին> « օրենքի 7-րդ հոդվածը վերաբերվում է ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների դրոշմավորմանը, իսկ կառավարության 26.10.1999 թ-ի թիվ 662 որոշումը՝ « ներմուծվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների ակցիզային նոր նմուշի դրոշմանիշներով դրոշմավորման կարգին: Ակնհայտ է, որ այդ երկու նորմատիվ ակտերն էլ <Սանտա> ՍՊԸ-ի, որպես արտոնագրային վճարով աշխատողի գործունեության հետ առնչություն չունեն և ցանկության դեպքում էլ չէին կարող խախտվել: Այդ մասին մեր կողմից նշվել է ստուգման ակտում, սակայն չի բողոքարկվել նպատակահարմար չլինելու, մասնավորապես, հարկային հետևանքներ չառաջացնելու պատճառով:

Վերոշարադրյալից ակնհայտ է, որ Կենտրոնի ՀՏ 18.03.2013թ. թիվ 2120159 ստուգման ակտը չի կարող հիմք հանդիսանալ իմ նկատմամբ ԿԻՎ օրենսգրքի 170.8 հոդվածով տուգանք սահմանելու համար, քանի որ այդ ակտում որևէ փաստ չկա

<Սանտա> ՍՊԸ-ի կողմից դրոշմավորման ենթակա չդրոշմավորված ապրանքներ իրացնելու մասին:

Նշեմ նաև, որ ստուգման ակտի հետևանքով դեռևս ս.թ. մարտ ամսին ինձ հրավիրել են ՊԵԿ հետաքննչական վարչություն, որտեղ գրավոր բացատրություններ են ներկայացրել ակտում նշված 1 շիշ գինու վերաբերյալ և ինձ հայտնել են, որ առգրավված գինին ուղարկել են փորձաքննության:

Ելնելով վերոգրյալից ընկերությունը խնդրում է Կենտրոն <Տ պետի կողմից 26.04.2013 թ-ին կայացված թիվ 217645 որոշումը վերացնել՝ << ՎԻՎ օրենսգրքի 170.8 հոդվածի հատկանիշով իրավախախտման բացակայության պատճառով:

<< ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցչի և ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Համաձայն << ԿԱ ՊԵԿ Կենտրոնի <Տ պետի 30.01.2013 թ-ի թիվ 2120159 հանձնարարագրի, << օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում <Սանտա> ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումը << օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու, ակցիզային դրոշմանիշների կիրառման, հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման և օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է << ԿԱ ՊԵԿ Կենտրոնի <Տ 18.03.2013 թ-ի թիվ 2120159 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որի 2-րդ կետով մասնավորապես արձանագրվել է.

27.02.2013 թ-ին ք.Երևան, Բաղրամյան 2 հասցեում գործող <Սանտա> ՍՊԸ-ին պատկանող հանրային սննդի կետում հայտնաբերվեց 1 շիշ առանց ակցիզային դրոշմանիշի ոգելից խմիչք՝ գինի 0.375 լ. տարողությամբ, 3300 դրամ արժեքով: Արդյունքում ընկերության կողմից խախտվել են <Ակցիզային հարկի մասին> << օրենքի 7-րդ հոդվածի պահանջները և << կառավարության 1999 թ-ի հոկտեմբերի 26-ի թիվ 662-ն որոշմամբ սահմանված կարգը:

Ստուգման ակտի 2-րդ կետով արձանագրված խախտումը, ըստ էության, հիմք է հանդիսացել 12.04.2013 թ-ի արձանագրության կազմման և << ԿԱ ՊԵԿ Կենտրոնի <Տ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 26.04.2013 թ-ի թիվ 217645 որոշման (այսուհետ նաև Որոշում) կայացման համար: Մասնավորապես, Որոշմամբ ընկերության տնօրենի նկատմամբ կիրառվել է <Վարչական իրավախախտումների վերաբերյալ> << օրենսգրքի 170.8 հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը՝ գումարով 300.000 դրամ:

Հարկ է նշել, որ <Վարչական իրավախախտումների վերաբերյալ> << օրենսգրքի 170.8 հոդվածի համաձայն. <Ակցիզային դրոշմանիշերով և (կամ) հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) դրոշմավորման ենթակա չդրոշմավորված (չվերադրոշմավորված) ապրանքներ իրացնելը, եթե դրանց ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (իսկ չնշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով չի գերազանցում հիսուն հազար դրամը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով>:

Քննարկվող դեպքում համաձայն ստուգման ակտի 2-րդ կետի, <Սանտա> ՍՊԸ-ին պատկանող հանրային սննդի կետում հայտնաբերվել է 1 շիշ առանց ակցիզային դրոշմանիշի ոգելից խմիչք: Այսինքն, ստուգման արդյունքում ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորման ենթակա չդրոշմավորված (չվերադրոշմավորված) ապրանքի իրացման փաստ, ըստ էության, չի արձանագրվել, այն դեպքում, երբ <Վարչական իրավախախտումների վերաբերյալ> << օրենսգրքի 170.8 հոդվածով

պատասխանատվությունը նախատեսված է ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորման ենթակա չդրոշմավորված (չվերադրոշմավորված) ապրանքներ իրացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի <բ> կետի դրույթներով, Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում <Վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքի 170.8 հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը կիրառելի չէ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Բեկանել ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 26.04.2013 թ-ի թիվ 217645 որոշումը և գործը կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ

